

Կ-357-02.10.2013-ՍՀ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնակչության զբաղվածության խթանման տնտեսական և կազմակերպական դրույթներն ու իրավական հիմքերը, սահմանում է զբաղվածության բնագավառում քաղաքացիների իրավունքների իրացումը, պետության կողմից մատուցվող ծառայությունների տեսակները, գործազրկության դեպքում սոցիալական աջակցության ձևերը, ինչպես նաև պետական-մասնավոր համագործակցության իրավական հիմքերը:

**Հոդված 2. Զբաղվածության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը**

1. Զբաղվածությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

**Հոդված 3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց զբաղվածությունը**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք ունեն ընտրություն կատարելու զբաղված և չզբաղված լինելու միջև, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

2. Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց զբաղվածությունը կարգավորվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Հայաստանի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց զբաղվածության պետական կարգավորումն իրականացվում է սոցիալական ապահովության միջոցով:

**Հոդված 4. Օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում կիրառվող հիմնական հասկացություններն են.

1) զբաղվածություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված և սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված գործունեության տեսակները.

2) աշխատանք փնտրող անձ՝ 16 տարին լրացած անձ, որը, անկախ սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված գործունեության որևէ տեսակով զբաղված լինելու հանգամանքից, սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքներն իրացնելու նպատակով դիմել է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին).

3) գործազուրկ՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած աշխատանք փնտրող և սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված գործունեության որևէ տեսակով չզբաղված անձ, որը աշխատանք գտնելու նպատակով հաշվառված է լիազորված մարմնում, պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի և ստացել է գործազուրկի կարգավիճակ.

4) աշխատանքից ազատման ռիսկ ունեցող անձ՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող այն անձը, որը՝

ա. մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի ավարտից հետո երեք ամսվա ընթացքում, որպես աշխատանք փնտրող անձ, հաշվառվել է լիազորված մարմնի կողմից,

բ. ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո երեք ամսվա ընթացքում, որպես աշխատանք փնտրող անձ, հաշվառվել է լիազորված մարմնի կողմից,

գ. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ գործատուից ստացել է գրավոր ծանուցում և ծանուցումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում, որպես աշխատանք փնտրող անձ, հաշվառվել է լիազորված մարմնի կողմից.

5) զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիր (այսուհետ՝ ամենամյա ծրագիր)՝ լիազորված մարմնի կողմից մշակված փաստաթուղթ, որին համապատասխան իրականացվում է զբաղվածության պետական քաղաքականությունը.

6) աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատում՝ աշխատանք փնտրող անձի որոշակի աշխատանք կատարելու հնարավորությունների որոշում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով՝ հիմք ընդունելով սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման չափանիշները և այդ անձի ցանկությունները.

7) թափուր աշխատատեղ՝ որոշակի մասնագիտություն (որակավորում) կամ հմտություն կամ ունակություն պահանջող և տվյալ պահին չզբաղեցված աշխատատեղ.

8) նոր ստեղծվող աշխատատեղ՝ գործատուի կողմից լիազորված մարմին կամ սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություն աշխատատեղի ստեղծման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելու պահից հաշված՝ առավելագույնը երեք ամսվա ընթացքում ստեղծվող աշխատատեղ.

9) զբաղվածության պետական ծրագրեր՝ սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ամենամյա ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով իրականացվող ծրագրեր և մատուցվող ծառայություններ, որոնք տրամադրվում են աշխատանք փնտրող անձին համալիր սոցիալական ծառայությունների շրջանակներում, ինչպես նաև գործատուներին և սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված ոչ պետական կազմակերպությանը՝ զբաղվածության պետական կարգավորման ոլորտում լիազորված մարմնի հետ համագործակցության շրջանակներում.

10) կայուն զբաղվածություն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ամենամյա ծրագրի (այդ թվում՝ զբաղվածության պետական յուրաքանչյուր ծրագրի և ծառայության) արդյունքում աշխատանք փնտրող անձի զբաղվածություն, որի չափանիշներն ու չափորոշիչները՝ ըստ զբաղվածության պետական ծրագրերի, սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից.

11) ժամանակավոր զբաղվածություն՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված ուղղություններով իրականացվող ծրագրերում ընդգրկվելու ժամանակահատվածում անձի զբաղվածություն, որի չափանիշները՝ ըստ զբաղվածության պետական ծրագրերի, սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից.

12) զբաղվածության ապահովման անհատական ծրագիր (այսուհետ՝ անհատական ծրագիր)՝ փաստաթուղթ, որտեղ նշվում են աշխատանք փնտրող անձի անհատական տվյալները, զբաղվածության պատմությունը, գնահատված կարիքները, առաջարկվող և իրականացվող միջոցառումները, աջակցության թիրախները և դրանց կատարողականը.

13) աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝ աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություն)՝ թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի համալրման համար գործատուներին, ինչպես նաև իրեն դիմած և (կամ) լիազորված մարմնի կողմից որպես աշխատանք փնտրող հաշվառված անձին (այսուհետ՝ իրեն դիմած անձ) աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություն.

14) զբաղված անձ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային գործունակություն ունեցող անձ, որը զբաղված է սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված գործունեության որևէ տեսակով:

#### **Հոդված 5. Զբաղվածություն համարվող գործունեության տեսակները**

1. Սույն օրենքի իմաստով զբաղվածություն համարվող գործունեության տեսակներն են՝
- 1) գործատուների մոտ վարձու աշխատանքային գործունեությունը (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելը, բացառությամբ վարձատրություն չնախատեսող դեպքերի),
  - 2) քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը,
  - 3) անհատ ձեռնարկատիրական և նոտարի գործունեությունը,
  - 4) արտոնագրային վճար վճարողի գործունեությունը,
  - 5) ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը,
  - 6) ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցումը:

#### **Հոդված 6. Հարմար աշխատանքը**

1. Աշխատանք փնտրող անձի համար հարմար է համարվում այն աշխատանքը, որը համապատասխանում է անձի մասնագիտական կրթությանը և որակավորմանը կամ պահանջում է լրացուցիչ մասնագիտական ուսուցում:
2. Մասնագիտական կրթություն և որակավորում ունեցող աշխատանք փնտրող անձի համար, ում հնարավոր չի եղել լիազորված մարմին դիմելուց հետո երեք ամսվա ընթացքում տեղավորել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հարմար աշխատանքի, հարմար է համարվում այն աշխատանքը, որը պահանջում է որակավորման բարձրացում կամ համապատասխանում է վերամասնագիտացման արդյունքում ձեռք բերված մասնագիտությանը:
3. Մասնագիտական կրթություն և որակավորում չունեցող աշխատանք փնտրող անձի համար հարմար է համարվում վարձատրվող ցանկացած աշխատանք, որը չի պահանջում մասնագիտական կրթություն և որակավորում կամ պահանջում է մինչև վեց ամիս ժամկետով՝ լիազորված մարմնի կողմից կազմակերպվող մասնագիտական կամ վարպետային ուսուցում:
4. Մասնագիտական կրթություն և որակավորում չունեցող աշխատանք փնտրող անձի համար, ով հրաժարվել է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ուսուցումից, հարմար է համարվում մասնագիտական կրթություն և որակավորում չպահանջող վարձատրվող ցանկացած աշխատանք:
5. Հարմար աշխատանքի պայմանները բնութագրող չափանիշները սահմանվում են *Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝* հաշվի առնելով սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված պահանջները, ինչպես նաև աշխատավայրի տրանսպորտային մատչելիությունը:

## **ԳԼՈՒԽ 2**

### **ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

#### **Հոդված 7. Զբաղվածության պետական քաղաքականության նպատակը**

1. Զբաղվածության պետական քաղաքականության նպատակը կայուն զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծումն է, որն իրականացվում է տնտեսության պետական կարգավորման և բնակչության սոցիալական պաշտպանության միջոցով:
2. Զբաղվածության պետական քաղաքականության նպատակը, որպես տնտեսական քաղաքականության բաղադրիչի, անհրաժեշտ քանակով և որակով աշխատուժի պահանջարկի բավարարման և առկա աշխատուժի առաջարկի արդյունավետ իրացման ապահովումն է, որը պետք է դիտվի տնտեսական կայուն զարգացման հիմնական պայմաններից մեկը:

3. Զբաղվածության պետական քաղաքականության նպատակը, որպես սոցիալական պաշտպանության քաղաքականության բաղադրիչի, արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների երաշխավորումն ու պայմանների հետևողական ապահովումն է, ինչպես նաև աշխատանք փնտրող անձի աշխատաշուկայում անմրցունակության որոշարկումն ու արդյունավետ ներառման ապահովումն է, որը պետք է դիտարկվի երկրում սոցիալական լարվածության թուլացման հիմնական պայմաններից մեկը:

4. Զբաղվածության պետական քաղաքականությունը միտված է ամրապնդելու սոցիալական համերաշխությունը, զարգացնելու զբաղվածության ոլորտում սոցիալական գործընկերությունը՝ նոր աշխատատեղերի ստեղծման, թափուր աշխատատեղերի համալրման, աշխատանքային պայմանների բարելավման և աշխատանքի վարձատրության համակարգերի կատարելագործման միջոցով:

#### **Հոդված 8. Զբաղվածության պետական քաղաքականության հիմնական սկզբունքները**

1. Զբաղվածության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝
  - 1) աշխատանքի կամավորությունը և աշխատանքի ազատ ընտրությունը՝ բացառելով խտրականությունը,
  - 2) սոցիալական ներառումն ու համերաշխությունը,
  - 3) կայուն զբաղվածության միջոցով անձի հասարակական դերի բարձրացումը,
  - 4) սոցիալական գործընկերությունը,
  - 5) աշխատաշուկայի պետական կարգավորման շրջանակներում տեղեկատվական համաչափությունը և թափանցիկությունը,
  - 6) արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների հետևողական ապահովումը,
  - 7) ըստ առաջնահերթությունների՝ պետական աջակցությունը,
  - 8) զբաղվածության ծառայություններ մատուցող պետական և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների միջև մրցակցային, փոխշահավետ և կայուն համագործակցությունը:

#### **Հոդված 9. Աշխատանք փնտրող անձի հաշվառումը, գործազուրկի կարգավիճակ տալը, գործազուրկի կարգավիճակի կասեցումը, վերականգնումը, դադարեցումը և հաշվառումից հանումը**

1. Լիազորված մարմնի կողմից աշխատանք փնտրող անձի հաշվառման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, *դրանց ներկայացման* կարգն ու ժամկետները, աշխատանք փնտրող անձի հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Գործազուրկի կարգավիճակը տրվում է լիազորված մարմնի կողմից անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ *5 աշխատանքային* օրվա ընթացքում:

3. Լիազորված մարմնի կողմից կասեցվում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված ժամանակավոր զբաղված անձանց գործազուրկի կարգավիճակը՝ ժամանակավոր զբաղվածության տևողությանը համապատասխան ժամկետով:

4. Լիազորված մարմինը վերականգնում է գործազուրկի կարգավիճակը սույն հոդվածի 3-րդ մասում նշված ժամանակավոր զբաղվածության ժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից, բացառությամբ սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված ուղղություններով իրականացվող ծրագրերի՝ գործազուրկի մեղքով ժամկետից շուտ դադարեցման դեպքերի:

5. Լիազորված մարմինը դադարեցնում է անձի գործազուրկի կարգավիճակը, եթե՝

- 1) գործազուրկը դարձել է զբաղված, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի.
- 2) *լրացել է գործազուրկի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը.*
- 3) գործազուրկը դատական կարգով ձանաչվել է անգործունակ.
- 4) գործազուրկի կողմից փաստաթղթերով ներկայացված տեղեկություններում հայտնաբերվել են ոչ հավաստի տվյալներ, որոնց հիման վրա տրվել է գործազուրկի կարգավիճակ.
- 5) գործազուրկը երկրորդ անգամ իրաժարվել է հարմար աշխատանքի առաջարկից.

6) գործազուրկը անհարգելի պատճառով լիազորված մարմնի հրավերով երկու անգամ չի ներկայացել հարմար աշխատանքի տեղավորման կամ զբաղվածության պետական ծրագրում ընդգրկվելու առաջարկություն ստանալու համար, ընդ որում՝ լիազորված մարմին գործազուրկի չներկայանալու հարգելի պատճառները սահմանվում են *Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից*։

7) գործազուրկը զբաղվածության պետական ծրագրում ընդգրկվելուց հետո հրաժարվել է հարմար աշխատանքի տեղավորման առաջարկից։

8) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով գործազուրկն ազատագրվման է դատապարտվել և պատիժը կրում է ազատագրվման վայրում կամ ուղարկվել է հարկադիր բուժման։

9) գործազուրկը մահացել է։

6. Գործազուրկի կարգավիճակը տրվում, կասեցվում, վերականգնվում և դադարեցվում է լիազորված մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի որոշմամբ։

### ԳԼՈՒԽ 3

## ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

### Հոդված 10. Զբաղվածության պետական կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության և կառուցվածքային համապատասխանության կարգավորում՝ աշխատանքի և աշխատավարձի, ձեռնարկատիրական, ֆինանսավարկային, ներդրումային, հարկային, տարածքային զարգացման, կրթական, ժողովրդագրական և աշխատուժի տեղաշարժի քաղաքականությունների միջոցով։

2. Զբաղվածության պետական քաղաքականությունը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը լիազորված մարմնի միջոցով և իրականացնում ամենամյա ծրագրին համապատասխան՝ համագործակցելով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ։

### Հոդված 11. Լիազորված մարմնի իրավասությունները

1. Լիազորված մարմինը՝

1) իրականացնում է աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի ուսումնասիրություն, վերլուծություն, ազդեցության գնահատում և *կանխատեսում*։

2) ապահովում է աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով։

3) իրականացնում է աշխատանք փնտրող անձի հաշվառումը, գործազուրկի կարգավիճակի տալը, կասեցումը, վերականգնումը և դադարեցումը։

4) հաստատում է ամենամյա ծրագրի մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը։

5) մշակում և իրականացնում է ամենամյա ծրագիրը։

6) *տեղաբաշխում է ամենամյա ծրագիրը՝* ըստ մարզերի և աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի (շահառուների), որի հիմքում դրվում են շահառուների ներգրավման առաջնահերթությունները, առանձին տարածաշրջանների աշխատաշուկաների հիմնական բնութագրիչները, ինչպես նաև սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի առանձնահատկությունները, որի կարգն ու չափանիշները սահմանվում են *Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից*։

7) իրականացնում է ամենամյա ծրագրի մոնիթորինգն ու գնահատումը։

8) կազմակերպում է աշխատանքի տոնավաճառ՝ *Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից* սահմանված կարգով։

9) համագործակցում է աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների հետ.

10) աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություններին մասնակից է դարձնում զբաղվածության պետական ծրագրի իրականացմանը՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

11) հաշվառում և հաշվառումից հանում է լիազորված մարմնի հետ համագործակցող աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությանը.

12) լիազորված մարմնի հետ համագործակցող աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությանը ներառում է պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ցանկում և հանում է ցանկից.

13) աշխատուժի առաջարկի ու պահանջարկի գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնում է առաջարկություններ կրթության ոլորտում պետական կառավարման լիազորված մարմին՝ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար ուսուցանվող մասնագիտությունների ցանկի և տեղերի վերաբերյալ.

14) վարում է էլեկտրոնային պաշտոնական կայքէջ և ձևավորում է տեղեկատվական շտեմարան՝ աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և փոխանակման ապահովման նպատակով.

15) ապահովում է հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների ձևավորումը և արդյունավետ գործունեությունը.

16) հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների ներկայացուցիչների գրավոր հարցման հիման վրա տրամադրում է տեղեկատվություն՝ ամենամյա ծրագրի իրականացման մասին.

17) գանգվածային լրատվության միջոցներով՝ պարբերաբար և էլեկտրոնային պաշտոնական կայքէջի միջոցով՝ առցանց հրապարակում է նոր ստեղծվող և թափուր աշխատատեղերի, աշխատաշուկայի վիճակի, ամենամյա ծրագրի կատարման ընթացքի՝ ծախսված ֆինանսական միջոցների և արդյունքների մասին տեղեկատվություն.

18) ապահովում է ամենամյա ծրագրին հատկացված ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը:

## **Հոդված 12. Ամենամյա ծրագրի մշակումը**

1. Ամենամյա ծրագիրը մշակվում է հետևյալ հիմնական գործընթացների ապահովման միջոցով՝

1) աշխատաշուկայի վերլուծություններ և գնահատումներ.

2) ամենամյա ծրագրում զբաղվածության պետական հետևյալ ծրագրերի ներառում՝

ա. գործող ծրագրեր, որոնց ընթացիկ և հեռանկարային արդյունավետությունը գնահատվել է դրական, հետագա շարունակության տեսանկյունից նպատակահարմար,

բ. նոր ծրագրեր, որոնք նախապես փորձարկվել են և շարունակական ներդրման տեսանկյունից գնահատվել են նպատակահարմար,

գ. նոր ծրագրեր, որոնք ենթակա են փորձարկման և գնահատման՝ հետագայում շարունակական ներդրման նպատակով.

3) ըստ մարզերի և աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի՝ զբաղվածության պետական ծրագրերի տեղաբաշխում.

4) զբաղվածության պետական ծրագրերի իրականացման ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների համամասնությունների սահմանում, այդ թվում՝ համայնքային բյուջեներից համաֆինանսավորմամբ միջոցների ներգրավման հնարավորությունների նախատեսում.

5) զբաղվածության պետական ծրագրերի ակնկալվող արդյունքների ընթացիկ և վերջնական թիրախավորում՝ ըստ ծրագրերի, մարզերի, շահառուների առանձին խմբերի, հիմք ընդունելով կայուն զբաղվածության ցուցանիշների միջնաժամկետ պլանավորումը.

6) իրավիճակից բխող ծրագրային ձևեր փոփոխությունների իրականացման նպատակով պահուստային ֆինանսական միջոցների, այդ թվում՝ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող հնարավոր ֆինանսական միջոցների նախատեսում՝ նախապես պլանավորված և, ըստ անհրաժեշտության, զբաղվածության պետական նոր ծրագրեր փորձարկելու համար.

7) ոչ պետական կազմակերպությանը զբաղվածության պետական առանձին ծրագրերի իրականացմանը մասնակցելու համամասնությունների նախատեսում.

8) ամենամյա ծրագրի նախագծի և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշման քննարկում հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կատարումն ապահովող հանրապետական եռակողմ հանձնաժողովում և վերջինիս կողմից տրված եզրակացության հետ միասին ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո ամենամյա ծրագրի ներառում համախմբված պետական բյուջեում և ներկայացում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

### **Հոդված 13. Ամենամյա ծրագրի իրականացումը**

1. Ամենամյա ծրագիրն իրականացվում է հետևյալ հիմնական գործընթացների ապահովման միջոցով`

1) աշխատանք փնտրող անձի հաշվառում, խորհրդատվության տրամադրում, կարիքների գնահատում, նպատակների և դրանից բխող համապատասխան գործողությունների նախանշում, անհատական ծրագրի կազմում.

2) լիազորված մարմնի և աշխատանք փնտրող անձի միջև անհատական ծրագրի իրականացման վերաբերյալ երկկողմ պայմանագրի կնքում.

3) ինքնասպասարկման և հնարավոր այլ եղանակներով աշխատանք փնտրող անձին լիազորված մարմնի կողմից էլեկտրոնային ծառայությունների տրամադրում.

4) որպես անհատական ծրագրի վերջնական արդյունք` աշխատանք փնտրող անձի զբաղվածության ապահովում.

5) մշակված ամենամյա ծրագրին համապատասխան`

ա. զբաղվածության պետական ծրագրերի իրականացում և փորձարկում,

բ. ոչ պետական կազմակերպության ներգրավման հնարավորությունների իրացում,

գ. իրավիճակից բխող ծրագրային ձկուն փոփոխությունների հնարավորությունների իրացում.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծառայությունների տրամադրում գործատուներին կամ նրանց ներկայացուցիչներին.

7) հաշվետվողականության ապահովում.

8) հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեներից ստացված առաջարկությունների դիտարկում և, ըստ անհրաժեշտության, ծրագրային ձկուն փոփոխությունների հնարավորությունների իրացում:

### **Հոդված 14. Ամենամյա ծրագրի մոնիթորինգն ու գնահատումը**

1. Ամենամյա ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

2. Ամենամյա ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է հետևյալ հիմնական գործընթացների ապահովման միջոցով`

1) զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգի և վերջնական արդյունքների գնահատման թիրախային ցուցանիշների սահմանում.

2) ընթացիկ ցուցանիշների` սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված թիրախային ցուցանիշներից շեղումների վերհանում և վերացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցի առաջադրում.

3) զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում մատուցված ծառայությունների արդյունքների մասին հետադարձ տեղեկատվության ստացում, վերլուծություն և գնահատում.

4) հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեներից ստացված համապատասխան առաջարկությունների դիտարկում:

3. Ամենամյա ծրագրի մոնիթորինգի ու գնահատման արդյունքում`

1) իրականացվում են սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված ժամանակացույցով նախատեսված միջոցառումները և գործողությունները.

2) օրենքով սահմանված կարգով ապահովվում են զբաղվածության պետական ծրագրերին ուղղված և ոչ նպատակային օգտագործված ֆինանսական միջոցների հետ վերադարձման գործընթացները:

## **Հոդված 15. Ամենամյա ծրագրի ֆինանսավորումը**

1. Ամենամյա ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվում են օրենքով:

2. Զբաղվածության պետական ծրագրերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **Հոդված 16. Զբաղվածության պետական ծրագրերին ուղղված և ոչ նպատակային օգտագործված ֆինանսական միջոցները վերադարձնելը**

1. *Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված ուղղություններով իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում անձի ստացած, ինչպես նաև ծրագրի իրականացման համար ծախսված ֆինանսական միջոցներն վերադարձվում են անձի կողմից, եթե տվյալ անձը ծրագրում ընդգրկվելու պահին կամ ընթացքում եղել է զբաղված կամ ներկայացրել է ոչ հավաստի տվյալներ կամ լիազոր մարմնին չի տեղեկացրել նախկինում ներկայացված տվյալներում կատարված փոփոխությունների մասին կամ խախտել է համապատասխան պայմանագրային պարտավորությունները:*

2. *Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով կամ 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված ուղղություններով իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում անձի ստացած, ինչպես նաև ծրագրի իրականացման համար ծախսված ֆինանսական միջոցները վերադարձվում են անձի կողմից, եթե տվյալ անձը ծրագրում ընդգրկվելու պահին եղել է զբաղված կամ ներկայացրել է ոչ հավաստի տվյալներ կամ լիազոր մարմնին չի տեղեկացրել նախկինում ներկայացված տվյալներում կատարված փոփոխությունների մասին կամ խախտել է համապատասխան պայմանագրային պարտավորությունները:*

3. Ֆինանսական միջոցները վերադարձվում են ամբողջությամբ՝ զբաղված դառնալու կամ խախտում թույլ տալու պահից սկսած, լիազորված մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի որոշմամբ:

4. Ֆինանսական միջոցները վերադարձվում են միանվագ կամ լիազորված մարմնի և անձի միջև գրավոր համաձայնությամբ կազմված ժամանակացույցին համապատասխան, իսկ անձի կողմից ֆինանսական միջոցները չվերադարձնելու կամ ժամանակացույցը խախտելու դեպքում այդ գումարները բռնագանձվում են դատական կարգով:

5. Զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում լիազորված մարմնի սխալի հետևանքով անձին վճարված ֆինանսական միջոցները վերադարձվում են *սխալը թույլ տված պաշտոնատար անձի (անձանց) կողմից*՝ լիազորված մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի որոշմամբ:

6. *Զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում գործատուների և ոչ պետական կազմակերպությունների կողմից ստացված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման միանվագ՝ լիազորված մարմնի հետ ունեցած պայմանագրային պարտավորությունների խախտումը թույլ տալու դեպքում՝ մեկ ամսյա ժամկետում, ընդ որում՝ գործատուների և ոչ պետական կազմակերպությունների կողմից ֆինանսական միջոցները չվերադարձնելու դեպքում այդ գումարները բռնագանձվում են դատական կարգով:*

## **Հոդված 17. Համաձայնեցման կոմիտեները**

1. Զբաղվածության հանրապետական և տարածքային ծրագրերի մշակման և իրականացման հարցերում համաձայնեցված որոշումներ կայացնելու նպատակով լիազորված մարմնի նախաձեռնությամբ ձևավորվում են հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեներ:

2. Հանրապետական համաձայնեցման կոմիտեի կազմում հավասար թվաքանակով ընդգրկվում են աշխատողների շահերը ներկայացնող արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության, գործատուների շահերը ներկայացնող հանրապետական կազմակերպությունների, գործադիր իշխանության հանրապետական մարմինների, ինչպես նաև լիազորված մարմնի ներկայացուցիչները:

3. Տարածքային համաձայնեցման կոմիտեի կազմում հավասար թվաքանակով ընդգրկվում են աշխատողների շահերը ներկայացնող արհեստակցական կազմակերպությունների

համապատասխան տարածքային միության, հասարակական կազմակերպությունների, գործատուների համապատասխան տարածքային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև լիազորված մարմնի ներկայացուցիչները:

4. Հանրապետական համաձայնեցման կոմիտեն ամենամյա ծրագրի պլանավորման փուլում քննարկում է ամենամյա ծրագրի նախագիծը և դրա վերաբերյալ դիրքորոշումը ներկայացնում լիազորված մարմին:

5. Տարածքային համաձայնեցման կոմիտեներն ամենամյա ծրագրի պլանավորման փուլում քննարկում են զբաղվածության տարածքային համապատասխան ծրագրերի նախագծերը և դրանց վերաբերյալ դիրքորոշումը ներկայացնում լիազորված մարմին:

6. Հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների ներկայացուցիչներն իրավունք ունեն՝

1) լիազորված մարմնից ստանալ տեղեկատվություն՝ զբաղվածության պետական ծրագրերի ընթացքի մասին.

2) ամենամյա ծրագրի իրականացման, մոնիթորինգի ու գնահատման փուլերում ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

7. Հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների գործունեության կազմակերպման կարգը և լիազորություններն իրենց իրավասության շրջանակներում սահմանվում են նրանցում ներկայացված կողմերի փոխադարձ համաձայնությամբ ձևավորված աշխատակարգով:

#### **Հոդված 18. Աշխատուժի տեղաշարժը**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակում և իրականացնում է աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժի կարգավորման միասնական պետական քաղաքականությունը:

2. Լիազորված մարմինն աշխատուժի տեղաշարժը կարգավորելու նպատակով՝

1) օրենքով սահմանված կարգով կնքում է միջազգային պայմանագրեր՝ արտագնա աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության հարցերով.

2) միջպետական հարաբերությունների վատթարացման, արտակարգ իրավիճակների դեպքում հանդես է գալիս առանձին պետություններում արտագնա աշխատանքի մեկնման աննպատակահարմարության մասին հայտարարությամբ.

3) իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով իրեն վերապահված այլ իրավունքներ և լիազորություններ:

3. Աշխատուժի ներքին տեղաշարժը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտաքին տեղաշարժը՝ նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Լիազորված մարմնի հետ համագործակցող աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունները կարող են կազմակերպել աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժեր՝ ամենամյա ծրագրի և (կամ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում:

#### **Հոդված 19. Լիազորված մարմնի և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցությունը**

1. Լիազորված մարմինը սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող աշխատանքի տեղավորման, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների հետ:

2. Լիազորված մարմինը համագործակցել ցանկացող ոչ պետական կազմակերպության հետ ստորագրում է համագործակցության հուշագիր, որի հիման վրա նրան հաշվառում և ներառում է իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ցանկում:

3. Համագործակցության հուշագիրը ներառում է.

1) լիազորված մարմնի կողմից ոչ պետական կազմակերպության հաշվառման և լիազորված մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ցանկում ներառման պայմանները.

2) լիազորված մարմնի կողմից ոչ պետական կազմակերպությանը հաշվառումից և լիազորված մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ցանկից հանելու պայմանները.

3) ոչ պետական կազմակերպության կողմից սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված տեղեկատվական շտեմարանի ձևավորման և վարման պայմանները.

4) սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված տեղեկատվական շտեմարանի ձևավորման և վարման գործընթացների՝ լիազորված մարմնի կողմից մոնիթորինգի իրականացման պայմանները:

4. Լիազորված մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ցանկում ներառված ոչ պետական կազմակերպությունը լիազորված մարմնից ստանում է աջակցություն առնվազն հետևյալ ուղղություններով.

1) մեթոդական օգնություն և անվճար տեղեկատվություն աշխատաշուկայի իրավիճակի, այդ թվում՝ թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին.

2) լիազորված մարմնում հաշվառված աշխատանք փնտրող անձանց վերաբերյալ անվճար տեղեկատվության տրամադրում.

3) ամենամյա ծրագրով նախատեսված զբաղվածության պետական ծրագրերի իրականացման գործընթացներում մասնակցություն:

5. Զբաղվածության պետական ծրագրերի իրականացման շրջանակում լիազորված մարմնի և ոչ պետական կազմակերպության փոխհարաբերությունները կարգավորվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված համագործակցության հուշագրի շրջանակներում լիազորված մարմնի հետ համագործակցող աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունը ձևավորում և պատշաճ կերպով վարում է տեղեկատվական շտեմարան, որը պետք է ներառի իր ծառայություններից օգտվող անձի անհատական տվյալների, աշխատանքի տեղավորման միջնորդության հիմնական պայմանների և դրանց կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

7. Լիազորված մարմինը լիազորված մարմնի հետ համագործակցող ոչ պետական կազմակերպությանը հանում է հաշվառումից և այդ մասին եռօրյա ժամկետում իրազեկում է ոչ պետական կազմակերպությանը՝

1) սույն հոդվածի 6-րդ մասում նշված տեղեկատվական շտեմարանը չունենալու և (կամ) պատշաճ կերպով չվարելու դեպքերում.

2) ոչ պետական կազմակերպության կողմից համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում:

8. Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունն աշխատանքի տեղավորման նպատակով իրեն դիմած անձի համար աշխատանքի տեղավորման ծառայություններ է մատուցում այդ անձի հետ կնքած պայմանագրի հիման վրա, որի օրինակելի ձևը սահմանվում է լիազորված մարմնի կողմից:

9. Աշխատանք փնտրող անձին ոչ պետական կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունները մատուցվում են անվճար, եթե դրանք իրականացվում են լիազորված մարմնի կողմից ոչ պետական կազմակերպությանը վերապահված զբաղվածության պետական ծրագրերի իրականացման շրջանակներում:

## **Հոդված 20. Գործատուների մասնակցությունը զբաղվածության պետական քաղաքականության իրականացմանը**

1. Լիազորված մարմինը զբաղվածության պետական քաղաքականության մշակման և իրականացման շրջանակներում համագործակցում է գործատուների հետ՝ գործընկերային, փոխշահավետ և մշտական հարաբերությունների հաստատման, հետևողական ընդլայնման, խորացման և հետադարձ կապի ապահովման միջոցով:

2. Կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, սահմանվում է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (այսուհետ՝ քվոտա)՝ հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք սովորող տարիքը չլրացած անձի աշխատանքի տեղավորման համար:

3. Քվոտայի պահանջն առաջանում է հարյուր և ավելի աշխատողներ ունեցող պետական կազմակերպությունների համար՝ կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 3 տոկոսի չափով:

4. Քվոտայի պահանջն առաջանում է հարյուր և ավելի աշխատողներ ունեցող ոչ պետական կազմակերպությունների համար՝ կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 1 տոկոսի չափով:

5. Քվոտայի պահանջը կատարված է համարվում, եթե մեկ հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում առնվազն 183 օր քվոտավորման ենթակա աշխատատեղը զբաղեցված է եղել հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած անձի կողմից՝ առանց ամենամյա ծրագրով հաշմանդամություն ունեցող գործազուրկի համար նախատեսված աջակցության:

6. Հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած անձի կողմից քվոտավորման ենթակա աշխատատեղը լրացված լինելու մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացվում՝ «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գրանցման հայտի հիման վրա:

7. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպությունը կատարում է մասհանում՝ մինչև քվոտայի պահանջն առաջանալու տարվան հաջորդող տարվա հունվարի 30-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված մասհանումը կատարվում է քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկի չափով:

9. Մասհանումներ չկատարելը կազմակերպության նկատմամբ առաջացնում է օրենքով սահմանված վարչական պատասխանատվություն:

10. Մասհանվող գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ բացված արտաբյուջետային միջոցների հաշվին:

11. Մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են հաշմանդամություն ունեցող անձանց առողջական, սոցիալական, աշխատանքային, մասնագիտական վերականգնման, հաշմանդամների աշխատանքի տեղավորման նպատակներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

12. Զբաղվածության պետական կարգավորման ոլորտում գործատուներն իրավունք ունեն՝

1) աշխատուժի ազատ ընտրության.

2) իրենց մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, աշխատատեղերի հնարավոր կրճատումների վերաբերյալ տրամադրել տեղեկություններ լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ձևով և եղանակով.

3) լիազորված մարմնից զբաղվածության պետական ծրագրերի, ինչպես նաև աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության և մասնագիտական խորհրդատվության ստացման.

4) սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվական շտեմարանում առկա տեղեկատվության ստացման.

5) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորելիս պետական աջակցության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

13. Լիազորված մարմնի կողմից գործատուներին մատուցվող ծառայությունները տրամադրվում են անվճար:

14. Լիազորված մարմինը գործատուի կողմից ներկայացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերը համալրելու նպատակով իրականացնում է միջնորդություն՝ աշխատանք փնտրող անձին ուղեգրելով գործատուի մոտ:

15. Սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված ուղեգրի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

16. Գործատուները զանգվածային ազատումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում են լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

## **Հոդված 21. Աշխատանք փնտրող անձի իրավունքները**

1. Աշխատանք փնտրող զբաղված անձն իրավունք ունի՝

- 1) հաշվառվելու նպատակով դիմել լիազորված մարմին.
  - 2) լիազորված մարմնից ստանալ զբաղվածության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և զբաղվածության պետական ծրագրերի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն.
  - 3) ստանալ տեղեկություններ սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվական շտեմարանում գրանցված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ.
  - 4) հարմար աշխատանքի ընտրության և տեղավորման միջնորդության.
  - 5) մասնագիտական կողմնորոշման.
  - 6) լիազորված մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների և անգործության՝ վերադասության կամ դատական կարգով բողոքարկման:
2. *Գործազուրկը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներից բացի, իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ընդգրկվել զբաղվածության պետական ծրագրերում հետևյալ ուղղություններով՝*
- 1) *մասնագիտական ուսուցում, որի ընթացքում ծրագրում ընդգրկվող անձին յուրաքանչյուր ամիս վճարվում է կրթաթոշակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չափով, ընդ որում՝ կրթաթոշակը նշանակվում և վճարվում է սահմանված ամսական կրթաթոշակի նկատմամբ հաշվարկված տվյալ ամսվա ընթացքում իրականացված ուսումնական դասընթացների օրերի համար.*
  - 2) ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող անձանց համար՝ մասնագիտական աշխատանքային փորձի ձեռք բերման աջակցություն.
  - 3) գործատուի կողմից լիազորված մարմին ներկայացված և առնվազն մեկ ամիս չլրացված թափուր աշխատատեղերի համալրման նպատակով՝ այլ վայր աշխատանքի տեղավորման աջակցություն.
  - 4) վարձատրվող հասարակական աշխատանքներին մասնակցություն:
3. Հաշմանդամություն ունեցող *գործազուրկը* սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքներից բացի՝
- 1) ունի աշխատանքի տեղավորման իրավունք՝ սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված քվոտայի ապահովման շրջանակներում.
  - 2) աշխատանքի տեղավորման դեպքում՝ աշխատատեղի հարմարեցման աջակցության՝ *Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:*
4. Աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձն իրավունք ունի ընդգրկվել ամենամյա ծրագրի շրջանակներում կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում:
5. Լիազորված մարմնի կողմից աշխատանք փնտրող անձին տրամադրվող զբաղվածության ծառայությունները մատուցվում են անվճար:

#### **Գ Լ ՈՒ Մ 4**

### **ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻ ԱՆՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԻ ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

#### **Հոդված 22. Աշխատաշուկայում անմրցունակության որոշարկումը**

1. Աշխատաշուկայում *գործազուրկի* անմրցունակության որոշարկման չափանիշներն են՝
  - 1) անձի *հաշմանդամություն ունենալու հանգամանքը.*
  - 2) անձի սոցիալական կարգավիճակը՝ հաշվի առնելով սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված լինելու, ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից վերադառնալու, արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում հաշվառված և դադարի (ռեմիսիայի) շրջանում գտնվելու, թրաֆիքինգի գոհի հանդիսանալու հանգամանքները.
  - 3) անձի տարիքը.
  - 4) անձի գործազուրկի կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածը.
  - 5) անձի բնակության վայրը (սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային, քաղաքային, գյուղական).
  - 7) անձի փախստական լինելու հանգամանքը.

8) անձի արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկը.

9) անձի՝ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելու հանգամանքը.

10) անձի աշխատանք գտնելու կամ մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունները՝ ելնելով այդ անձի ունեցած մասնագիտությամբ (որակավորմամբ) աշխատանքային ստաժից, աշխատանքային փորձից, աշխատանք փնտրելու ակտիվությունից և աշխատաշուկայում համապատասխան պահանջարկի առկայությունից.

11) անձի մինչև երեք տարեկան երեխա խնամելու հանգամանքը.

12) անձի ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում լիազորված մարմնում հաշվառվելու հանգամանքը:

2. Հիմք ընդունելով սույն հոդվածի առաջին մասով նախատեսված չափանիշները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման կարգը:

### **Հոդված 23. Աշխատաշուկայում անմրցունակ անձի զբաղվածության ապահովումը**

1. Աշխատաշուկայում անմրցունակ անձը սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված իրավունքներից բացի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ունի՝

1) լիազորված մարմնի կողմից զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք.

2) աշխատանքի տեղավորման դեպքում՝ աշխատավարձի մասնակի փոխհատուցման իրավունք.

3) աշխատանքի տեղավորման դեպքում՝ անհրաժեշտ աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռք բերման համար միանվագ փոխհատուցման իրավունք.

4) փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության իրավունք.

5) լիազորված մարմնի հետ համագործակցող ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության իրավունք.

6) լիազորված մարմնի միջնորդությամբ հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման իրավունք.

7) սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության իրավունք:

## **ԳԼՈՒԽ 5**

### **ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՈՐՏԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

#### **Հոդված 24. Զբաղվածության պետական կարգավորման ոլորտի տեղեկատվական ապահովումը**

1. Զբաղվածության ոլորտի նպատակային կառավարման, ամենամյա պետական ծրագրի հասցեականության ապահովման, անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման, այդ թվում՝ պետական-մասնավոր համագործակցության շրջանակներում, աշխատաշուկայի օբյեկտիվ վերլուծության և կանխատեսման նպատակներով լիազորված մարմինը ձևավորում և վարում է տեղեկատվական շտեմարան:

2. Տեղեկատվական շտեմարանը ներառում է տեղեկատվություն՝ աշխատանք փնտրող անձանց, գործատուների կողմից ներկայացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, զբաղվածության պետական ծրագրերի հնարավորությունների և այդ ծրագրերի ընթացիկ արդյունքների վերաբերյալ: Գործատուների կողմից ներկայացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի ցանկը տեղադրվում է լիազորված մարմնի կայքէջում:

3. Զբաղվածության պետական ծրագրում ներգրավված անձանց աշխատանքի տեղավորման, ինչպես նաև այդ անձանց՝ տվյալ աշխատատեղում աշխատանքային հարաբերությունների հետագա շարունակության վերաբերյալ ստացված տեղեկատվությունը պարբերաբար ներառվում է տեղեկատվական շտեմարանում և օգտագործվում՝ ամենամյա ծրագրի պլանավորման, իրականացման, մոնիթորինգի, գնահատման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ նպատակներով:

4. Տեղեկատվական շտեմարանն ապահովում է՝

1) աշխատանք փնտրող անձանց և գործատուների՝ լիազորված մարմին անհատական այցելությունների և (կամ) էլեկտրոնային ձևով և առցանց եղանակով գրանցման և համապատասխան տեղեկատվության մուտքագրման հնարավորությունները:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում լիազորված մարմնի հետ հետադարձ կապի հնարավորությունը:

3) լիազորված մարմին անհատական այցելությունների և (կամ) էլեկտրոնային ձևով և առցանց եղանակով տեղեկատվության հասանելիությունը շահագրգիռ բոլոր կողմերին, այդ թվում՝ աշխատանք փնտրող անձինք, գործատուներ, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություններ:

5. Աշխատանք փնտրող անձանց և գործատուների անհատական տվյալներն առցանց եղանակով կարող են հասու լինել միայն նրանց գրավոր համաձայնությամբ:

6. Տեղեկատվական շտեմարանի ներդրման, վարման և շահագործման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

## ԳԼՈՒԽ 6

### ՊՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

#### Հոդված 25. Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

1. Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ 7

### ՕՐԵՆՔԸ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

#### Հոդված 26. Օրենքը ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից, իսկ 4-րդ մասը՝ 2016 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում 2005 թվականի հոկտեմբերի 24-ի «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՕ-206-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը:

4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիազորված մարմնում հաշվառված և գործազրկության նպաստի ստացման իրավունք ունեցող անձանց գործազրկության նպաստի նշանակման, վճարման, վերահաշվարկի, կասեցման, դադարեցման և վերականգնման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն հոդվածի 5-19-րդ մասերով:

5. Գործազուրկին գործազրկության նպաստ է նշանակվում լիազորված մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի որոշմամբ գործազուրկի կարգավիճակ ստանալու օրվանից՝ նրա անվամբ առնվազն մեկ տարի սոցիալական ապահովության վճարներ, իսկ 2013 թվականի հունվարի 1-ից՝ եկամտային հարկի վճարումներ կատարված լինելու դեպքում:

6. Գործազրկության նպաստի վճարման նվազագույն տևողությունը սահմանվում է 6 ամիս, իսկ առավելագույն տևողությունը գործազուրկի կարգավիճակում գտնվելու յուրաքանչյուր ժամանակահատվածում սահմանվում է 12 ամիս, ընդ որում՝ առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող անձանց գործազրկության նպաստի վճարման ժամկետները երկարաձգվում են յուրաքանչյուր երեք տարվա համար մեկ ամսով:

7. Գործազրկության նպաստի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

8. Եթե անձը գործազրկության նպաստ է ստանում մեկից ավելի անգամ, ապա յուրաքանչյուր հաջորդ անգամ նրան գործազրկության նպաստ է նշանակվում նրա գործազուրկի կարգավիճակը դադարեցնելուց հետո նրա անվամբ առնվազն մեկ տարի սոցիալական ապահովության վճարներ, իսկ 2013 թվականի հունվարի 1-ից՝ եկամտային հարկի վճարումներ կատարվելու դեպքում, ընդ որում՝ գործազրկության նպաստի վճարման տևողությունը հաշվարկվում է լիազորված մարմնի կողմից վերջին անգամ անձի հաշվառումից հանվելուց հետո ձեռք բերված աշխատանքային ստաժի չափին համապատասխան:

9. Գործազրկության նպաստը լիազորագրով կարող է վճարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Նշանակված, սակայն գործազրկության նպաստ նշանակող մարմնի մեղքով չվճարված գործազրկության նպաստը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման, ընդ որում՝ նշված դեպքում չստացած գործազրկության նպաստը վճարվում է միանվագ:

11. Իրավասու մարմինների կողմից կալանքի տակ կամ ազատազրկման վայրում գտնվող կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների ենթարկված անձանց մինչև կալանավորման կամ ազատազրկման օրը, ինչպես նաև հարկադիր բուժման ենթարկման օրը չստացած գործազրկության նպաստը վճարվում է միանվագ՝ առանց ժամկետի սահմանափակման: Չստացած գործազրկության նպաստը կարող է վճարվել նաև սույն հոդվածի 9-րդ մասում նշված լիազորագրի հիման վրա:

12. Հանրապետության տարածքում բնակության վայրը փոխած նպաստառու գործազրկի գործազրկության նպաստի վճարումը կասեցվում է, և նոր բնակավայրում շարունակվում է նպաստի վճարումը կասեցման օրվանից:

13. Նպաստառու գործազրկի մահվան դեպքում չստացած գործազրկության նպաստի գումարը վճարվում է ընտանիքի չափահաս անդամին կամ մահացածի կնոջը (ամուսնուն), ծնողներից որևէ մեկին կամ անչափահաս երեխաների օրինական ներկայացուցչին, խնամակալին կամ հոգաբարձուին, եթե նշված անձանցից որևէ մեկը գործազրկի մահից հետո՝ վեց ամսվա ընթացքում, ներկայացրել է դիմում:

14. Գործազրկության նպաստի վճարումը լիազորված մարմնի կողմից կասեցվում է, եթե անձը գործազրկության նպաստի ստացման ժամանակահատվածում դարձել է ժամանակավոր զբաղված՝ ժամանակավոր զբաղվածության տևողությանը համապատասխան ժամկետով:

15. Եթե գործազրկության նպաստի վճարման կասեցման ժամանակահատվածն ավարտվելուց հետո անձն ունի գործազրկության նպաստ ստանալու իրավունք, ապա լիազորված մարմինը վերականգնում է գործազրկության նպաստի վճարումը կասեցման ժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից:

16. Երկու ամիս ժամկետով կասեցվում է գործազրկության նպաստի վճարումը, եթե գործազրկը մեկ անգամ հրաժարվել է հարմար աշխատանքի տեղավորման առաջարկից, իսկ ժամանակավոր աշխատանքի, մասնագիտական ուսուցման դասընթացներին մասնակցելուց հրաժարվելու դեպքում՝ դրանց տևողությանը համապատասխան ժամկետով:

17. Գործազրկության նպաստի նշանակման կամ վերահաշվարկի համար նոր հիմքերի ի հայտ գալու դեպքում լիազորված մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի որոշմամբ նշանակվում է գործազրկության նպաստ, կամ կատարվում է վերահաշվարկ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

18. Լիազորված մարմինը դադարեցնում է գործազրկության նպաստի վճարումը սույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ՝

1) գործազրկության նպաստի վճարումը կասեցնելիս պարզվում է, որ դրա ստացման ժամկետը լրանում է կասեցման ժամկետից ավելի շուտ կամ միաժամանակ:

2) գործազրկը հեռացվել է ուսումնական հաստատությունից մասնագիտական ուսուցման ընթացքում ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով:

19. Գործազրկության նպաստը նշանակվում, վճարվում, կասեցվում, վերականգնվում և դադարեցվում է լիազորված մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի որոշմամբ:

20. Մինչև զբաղվածության իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը՝ դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:

**Ամփոփաթերթիկ**

**ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված  
«Ջբաղվածության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի կապակցությամբ առաջարկությունների**

Առաջարկության հեղինակ	Հոդված	Բովանդակություն	Եզրակացություն
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Խ.Հարությունյան 2013-10-28 N 02/10.1/16117-13</p>	<p>«Ջբաղվածության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 11-րդ, 28-րդ հոդվածներ</p>	<p>1. Նախագծի 11-րդ հոդվածում հստակեցնել ամենամյա ծրագրի մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները՝ այն հաշվարկով, որ ծրագրի մոնիթորինգի և գնահատման գործընթացներին մասնակից դառնան հասարակական հատվածի ներկայացուցիչները:</p> <p>2. Նախագծի 28-րդ հոդվածի 2-րդ կետի վերջում ավելացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Գործատուների կողմից ներկայացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի ցանկը տեղադրվում է լիազոր մարմնի կայքէջում»:</p>	<p>1.Առաջարկությունը բովանդակային առումով ընդունելի է և նախագծով նախատեսվում է ամենամյա ծրագրի մոնիթորինգի և գնահատման գործընթացներում սոցիալական գործընկերության կողմերի մասնակցությունը (14-րդ և 17-րդ հոդվածներ):</p> <p>2. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 28-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 24-րդ հոդված) 2-րդ կետը լրացվել է հետևյալ նախադասությամբ. «Գործատուների կողմից ներկայացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի ցանկը տեղադրվում է լիազորված մարմնի կայքէջում:»</p>
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Ս.Ավետիսյան 2013-10-31 N 02/10.5/16495-13</p>	<p>Նախագծի 20-րդ հոդված</p>	<p>«Ջբաղվածության մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 20-ի 3. և 4. կետերը շարադրել հետևյալ կերպ. 3. Քվոտայի պահանջն առաջանում է՝ 1) հիսուն և ավելի աշխատողներ ունեցող պետական կազմակերպությունների համար կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 3 տոկոսի չափով. 2) հարյուր և ավելի աշխատողներ ունեցող պետական կազմակերպությունների համար կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 5 տոկոսի չափով: 4. Քվոտայի պահանջն առաջանում է՝ 1) հիսուն և ավելի աշխատողներ ունեցող ոչ պետական կազմակերպությունների համար կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 1 տոկոսի չափով. 2) հարյուր և ավելի աշխատողներ ունեցող ոչ պետական կազմակերպությունների համար կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 3 տոկոսի չափով:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել: Նախագծի 20-րդ հոդվածում նախատեսված քվոտայի չափաքանակների որոշման նպատակով իրականացվել են քվոտայի ներդրման ռիսկերի վերլուծություն, գնահատում: Նախագծով առաջարկվող քվոտային վերաբերող դրույթները քննարկվել են շահագրգիռ պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ, այդ թվում՝ սոցիալական գործընկերության շրջանակներում: Արդյունքում, քվոտայի չափերի և ներդրման ժամկետների համաձայնեցված և ընդունելի տարբերակը ներառվել է նախագծում:</p>

<p>ՀՀ Աժ պատգամավոր Զ. Փոստանջյան 2013-11-04 N 02/10.5/16693-13</p>	<p>Նախագծի 27-րդ հոդված</p>	<p>Նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մասում «3 ամիս» բառերը փոխարինել «12 ամիս» բառերով:</p>	<p>Առաջարկությունն ունի հստակեցման կարիք՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Աժ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի նախագծի 27-րդ հոդվածում «3 ամիս» բառերը բացակայում են:</p>
<p>ՀՀ Աժ պատգամավորներ Հ. Հակոբյան Ա. Մխիթարյան Վ. Մարկոսյան Ռ. Հովսեփյան 2013-11-06 N 02/10.5/16900-13</p>	<p>Նախագծի հոդված 4-րդ</p>	<p>1. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետով տալ «կայուն զբաղվածություն» հասկացության սահմանումը:</p> <p>2. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետով սահմանված «սահմանվում են լիազորված մարմնի կողմից» բառերը փոխարինել «սահմանվում են ՀՀ կառավարության կողմից» բառերով:</p> <p>3. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետով սահմանված «սահմանվում են լիազորված մարմնի կողմից» բառերը փոխարինել «սահմանվում են ՀՀ կառավարության կողմից» բառերով:</p> <p>4. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի աշխատանքից ազատման ռիսկ ունեցող անձ հանդիսացող «ա» և «բ» կետերով սահմանվածներին նախատեսել նաև նախագծի 22-րդ հոդվածով սահմանված աշխատաշուկայում անմրցունակների շարքում:</p>	<p>1. Առաջարկությունը բովանդակային իմաստով ընդունելի է և նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված է «կայուն զբաղվածության» հասկացությունը, որի չափանիշներն ու չափորոշիչները նախատեսված է ամրագրել ՀՀ կառավարության որոշմամբ:</p> <p>2. Առաջարկությունն ընդունվել է և կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>3. Առաջարկությունն ընդունվել է և կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>4. Առաջարկությունն ընդունվել է և 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր 11-րդ և 12-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ. «11) անձի մինչև 3 տարեկան երեխա խնամելու հանգամանքը. 12) անձի ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո 6 ամսվա ընթացքում լիազորված մարմնում հաշվառվելու հանգամանքը:»:</p> <p>5. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 14-րդ և 15-րդ կետերում կատարվել են փոփոխություններ, ըստ որի գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործողները համարվել</p>
	<p>Նախագծի հոդված 5-րդ</p>	<p>5. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով սահմանել գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործողի զբաղվածություն համարվող գործունեության տեսակը:</p>	

	<p>Նախագծի հոդված</p> <p>6-րդ</p>	<p>6. Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված «սահմանվում են լիազորված մարմնի կողմից» բառերը փոխարինել «սահմանվում են ՀՀ կառավարության կողմից» բառերով:</p>	<p>Են գործազուրկ, եթե զբաղված չեն նախագծի 5-րդ հոդվածով նախատեսված գործունեության որևէ տեսակով:</p> <p>6. Առաջարկությունն ընդունվել է և կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
	<p>Նախագծի հոդված</p> <p>10-րդ</p>	<p>7. Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «ամենամյա» բառից հետո ավելացնել «,եռամյա և հեռանկարային» բառերը:</p>	<p>7. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ նախագծով նախատեսված է, որ լիազորված մարմնի կողմից մշակվում է միայն ամենամյա ծրագիրը, որը համարվում է զբաղվածության պետական կարգավորման հիմնական գործիքը և հիմնվում է յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարության կողմից հաստատվող միջնաժամկետ ծախսային ծրագրի, ինչպես նաև զբաղվածության ռազմավարական ծրագրի վրա:</p>
	<p>Նախագծի հոդված</p> <p>13-րդ</p>	<p>8. Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով սահմանված «լիազորված մարմնի սահմանված կարգով» բառերը փոխարինել «ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով» բառերով:</p>	<p>8. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը խմբագրվել է, որի արդյունքում հանվել են «լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով» բառերը: Հաշվետվողականության վերաբերյալ դրույթները կներառվեն ՀՀ կառավարության կողմից հաստատվող զբաղվածության պետական ծրագրերի իրականացման կարգերում:</p>
	<p>Նախագծի հոդված</p> <p>16-րդ</p>	<p>9. Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերում «անձը», «անձի» և «անձին» բառերից առաջ ավելացնել «ֆիզիկական և իրավաբանական» բառերը:</p>	<p>9. Առաջարկությունը բովանդակային առումով ընդունվել է և նախագծի 16-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 5-րդ մասով, որով նախատեսված է զբաղվածության պետական ծրագրերին ուղղված և ոչ նպատակային օգտագործված ֆինանսական միջոցների վերադարձը գործատուների և ոչ պետական կազմակերպությունների կողմից:</p>

<p>Նախագծի հոդված</p>	<p>19-րդ</p>	<p>10. Նախագծի 19-րդ հոդվածի 8-րդ մասը լրացնել «,որի օրինակելի ձևը սահմանվում է լիազորված մարմնի կողմից» բառերով:</p> <p>11. Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված պայմանների բավարարման դեպքում՝ աշխատանք փնտրող անձին կատարվում է մասնակի փոխհատուցում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:»:</p>	<p>10. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 19-րդ հոդվածի 8-րդ մասը լրացվել է «,որի օրինակելի ձևը սահմանվում է լիազորված մարմնի կողմից» բառերով:</p> <p>11. Առաջարկությունը հստակեցման և լրացուցիչ քննարկման կարիք ունի:</p>
<p>Նախագծի հոդված</p>	<p>20-րդ</p>	<p>12. Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ և 6-րդ մասերում «հաշմանդամություն ունեցող» բառերից հետո լրացնել «և տարիքային կենսաթոշակի իրավունք սովող տարիքը չլրացած» բառերով:</p> <p>13. Նախագծի 20-րդ հոդվածը 6-րդ մասից հետո լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված քվոտայի չափերից ավելի կատարված լինելու դեպքում, ոչ պետական կազմակերպությունները, 2 տարի ժամկետով, ստանում են լրացուցիչ ֆինանսավորում՝ քվոտայի չափերից դուրս յուրաքանչյուր աշխատատեղի համար ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի չափով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:»:</p> <p>14. Նախագծի 20-րդ հոդվածի 13-րդ մասում «գործատուների հետ համագործակցության շրջանակներում» բառերը հանել:</p> <p>15. Նախագծի 20-րդ հոդվածի 8-րդ մասից հետո ավելացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ. «Եթե լիազորված մարմնի կողմից ոչ պետական կազմակերպության պահանջով համապատասխան մասնագիտությամբ հաշմանդամ չի առաջարկվում, ապա սովյալ կազմակերպությունն առաջին անգամ ազատվում է քվոտայի պահանջը կատարելուց և ՀՀ</p>	<p>12. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ և 6-րդ մասերում «հաշմանդամություն ունեցող» բառերից հետո լրացվել են «և տարիքային կենսաթոշակի իրավունք սովող տարիքը չլրացած» բառերը:</p> <p>13. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ նախագծով նախատեսված է քվոտայի պահանջի սահմանում 100 և ավելի աշխատողներ ունեցող պետական և ոչ պետական կազմակերպությունների համար՝ որպես սոցիալական պարտավորություն:</p> <p>14. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 20-րդ հոդվածի 12-րդ մասից հանվել են «գործատուների հետ համագործակցության շրջանակներում» բառերը:</p> <p>15. Առաջարկությունը չի ընդունվել, նկատի ունենալով, որ նախագծով առաջին անգամ է առաջարկվում ՀՀ-ում քվոտայի ներդրումը: Նախագծով առաջարկվել է հնարավորինս պարզեցված մեխանիզմ, որի հիմքում դրված են սոցիալական պատասխանատվության սկզբունքը:</p>

	<p>Նախագծի հոդված</p> <p>21-րդ</p>	<p>կառավարության կողմից սահմանված կարգով լիազորված մարմնի հետ ստորագրվում է պայմանագիր՝ համապատասխան մասնագիտությամբ կամ այլ մասնագիտությամբ աշխատանք փնտրող հաշմանդամ տրամադրելու համար:»:</p> <p>16. Նախագծի 20-րդ հոդվածի 13-րդ մասի 5-րդ ենթակետում «լիազորված մարմնի սահմանած կարգով» բառերը փոխարինել «&lt;&lt; կառավարության սահմանած կարգով» բառերով:</p> <p>17. Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասում «լիազորված մարմնի» բառերը փոխարինել «&lt;&lt; կառավարության» բառերով:</p> <p>18. Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ ենթամասը հանել:</p> <p>19. Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթամասի «փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցություն» բառերին ավելացնել «&lt;&lt; կառավարության կողմից սահմանված կարգով» բառերը:</p>	<p>Մասնավորապես, նախագծի 20-րդ հոդվածով նախատեսվում է տարբերակված և արդարացի մոտեցում քվոտայի պահանջը կատարող և չկատարող կազմակերպությունների համար, ըստ որի, քվոտայի պահանջը չկատարող կազմակերպությունները վճարում են մասհանումներ, որոնք պետք է ուղղվեն հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության աջակցության ապահովմանը: Մյուս կողմից, առաջարկվող մեխանիզմը հնարավորինս զերծ է լրացուցիչ վարչարարությունից և դրանով պայմանավորված ամենատարբեր ռիսկերից:</p> <p>16. Առաջարկությունն ընդունվել է և կատարվել են համապատասխան փոփոխություններ նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերում և 20-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետում:</p> <p>17. Առաջարկությունն ընդունվել է և կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>18. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասից 5-րդ կետը հանվել է և ներառվել 23-րդ հոդվածի 1-ին մասում, որպես աշխատաշուկայում անմրցունակ անձանց իրավունք:</p> <p>19. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը տեղափոխվել է 23-րդ հոդվածի 1-ին մաս որպես 4-րդ կետ, ըստ որի փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցությունը դիտվում է որպես աշխատաշուկայում անմրցունակ անձի իրավունք, իսկ 23-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է, որ աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար նախատեսվող ծրագրերի</p>
--	------------------------------------	---	---

	<p>Նախագծի գլուխ 4</p> <p>Նախագծի հոդված 23-րդ</p> <p>Նախագծի հոդված 27-րդ</p> <p>Նախագծի հոդված 28-րդ</p>	<p>20. Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետը լրացնել «ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով» բառերով:</p> <p>21. Նախագծի 4-րդ գլխից հանել «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ» բառերը:</p> <p>22. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը լրացնել «ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով» բառերով:</p> <p>23. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ ենթամասերով նախատեսված փոխհատուցում՝ ինքնուրույն աշխատանք փնտրելու, ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցելու, այլ բնակավայրեր աշխատանքի տեղավորվելու, գործուղման, բնակարանի վարձակալության, կոմունալ, ընտանիքի անդամների և զույգի տեղափոխման ծախսերի՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:»:</p> <p>24. Նախագծի 27-րդ հոդվածով նախատեսված կրթաթոշակի չափն ավելացնել և 2-րդ մասում «50 տոկոս» բառերը փոխարինել «60 տոկոս» բառերով:</p> <p>25. Նախագծի 28-րդ հոդվածով սահմանել նաև տեղեկատվական շտեմարանի ձևավորման կարգն ու շտեմարանում ներառվող տվյալները սահմանում է ՀՀ կառավարությունը:</p>	<p>իրականացման կարգերը կսահմանվեն ՀՀ կառավարության կողմից:</p> <p>20. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը լրացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» բառերով:</p> <p>21. Նախագծի գլուխ 4-ը հանվել է և 21-րդ հոդվածը ներառվել է գլուխ 3-ում:</p> <p>22. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը «բացի» բառից հետո լրացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» բառերով:</p> <p>23. Առաջարկությունը հստակեցման և լրացուցիչ քննարկման կարիք ունի:</p> <p>24. Նախագծով առաջարկվում է կրթաթոշակի չափը սահմանել ՀՀ կառավարության կողմից:</p> <p>25. Առաջարկությունն ընդունվել է և հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>ՀՀ Աժ պատգամավոր Ռ.Մուրադյան 2013-11-11 N 02/10.5/17116-13</p>	<p>Նախագծի 4-րդ հոդված</p>	<p>1. Նախագծի հոդված 4-ի 1-ին կետի 8-րդ ենթակետը ամբողջությամբ հանել կամ հանել «իրական մտադրության» հասկացությունը՝ վերաձևակերպելով հետևյալ խմբագրությամբ. «Նոր ստեղծվող</p>	<p>1. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից հանվել են «իրական մտադրության» բառերը:</p>

	<p>Նախագծի 6-րդ հոդված</p> <p>Նախագծի 11-րդ հոդված</p> <p>Նախագծի 14-րդ հոդված</p>	<p>աշխատատեղ՝ գործատուի կողմից լիազորված մարմին կամ սույն հոդվածի 1-ին մասի 13-կետով սահմանված աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություն աշխատատեղի ստեղծման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելու պահից հաշված՝ առավելագույնը երեք ամսվա ընթացքում ստեղծվող աշխատատեղ»:</p> <p>2. Նախագծի հոդված 6-ի 5-րդ կետում նշված է. «Հարմար աշխատանքի պայմանները բնութագրող չափանիշները սահմանվում են լիազորված մարմնի կողմից՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված պահանջները, ինչպես նաև աշխատավայրի տրանսպորտային մատչելիությունը», մինչդեռ Հոդված 11-ում այդ լիազորությունները սահմանված չեն: Առաջարկում ենք հոդված 11-ում ավելացնել նոր 19-րդ կետ՝ հետևյալ խմբագրությամբ. «Սահմանում է հարմար աշխատանքի պայմանները բնութագրող չափանիշները»:</p> <p>3. Հոդված 11-ի 8-րդ կետը խմբագրել նոր ձևակերպմամբ. «Սահմանում է տոնավաճառի կազմակերպման կարգը»:</p> <p>4. Հոդված 14-ի 2-րդ կետի 4-րդ ենթակետի «հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեներից» հասկացությունը բացատրել Հոդված 4-րդ –ի «Օրենքում կիրառվող հասկացությունները» բաժնում:</p>	<p>2. Առաջարկությունն ընդունվել է, նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մասում կատարվել է փոփոխություն և հարմար աշխատանքի պայմանները բնութագրող չափանիշները սահմանվելու են ՀՀ կառավարության կողմից:</p> <p>3. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ աշխատանքի տոնավաճառի կազմակերպման կարգը սահմանվելու է ՀՀ կառավարության կողմից:</p> <p>4. Առաջարկությունը չի ընդունվել: Առաջարկը բովանդակային առումով արդեն իսկ իրացված է նախագծի 17-րդ հոդվածում, որտեղ սահմանված են հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների կազմավորման համամասնությունները, նպատակը և իրավասությունները:</p>
<p>ՀՀ ԱԺ պատգամավորներ Ա.Մինասյան Ա.Վարդանյան 2013-11-11 N 02/10.5/17116-13</p>	<p>Նախագծի վերնագիրը</p>	<p>1. Ջբաղվածության ոլորտը կարգավորող գործող օրենքի վերնագիրը և բովանդակությունը անդրադառնում էր նաև գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության քաղաքականությանը, ինչը պահպանված չէ օրինագծի դեպքում: Առաջարկվում է պահպանել գործող մոտեցումը:</p>	<p>1. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ նախագծով ամրագրվում են Ջբաղվածության նոր քաղաքականության իրավական հիմքերը, ինչը հիմնված է Ջբաղվածության ակտիվ ծրագրերի արդյունքում աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն Ջբաղվածության ապահովման հիմնական նպատակի վրա:</p>

<p>Նախագծի 10-րդ հոդված</p>	<p>2. Գործող օրենքի 10-րդ հոդվածում ամրագրված զբաղվածության ոլորտի պետական քաղաքականության նպատակը ամբողջությամբ փոփոխվել է. Վերացվել է լրիվ և արդյունավետ զբաղվածության համար պայմանների ստեղծման պետական քաղաքականության նպատակը, ամրագրվել է կայուն զբաղվածության և հռչակագրային բնույթ ունեցող օրինագծի 7-րդ հոդվածով առաջարկվող մոտեցումները: Վերջիններս կարող են դիտարկվել օրինագծի ընդունման հիմնավորման համատեքստում, բայց ոչ օրենքի դրույթ, քանի որ դրանց կատարման մեխանիզմները, չափորոշիչները և նորմատիվ իրավական ակտին բնորոշ լեզվառձական բնույթը ուղղակի բացակայում են: Առաջարկվում է պահպանել լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովմանը միտված պետական քաղաքականության գործող օրենսդրական դրույթը և ամբողջությամբ վերախմբագրել օրինագծի 7-րդ հոդվածը:</p>	<p>2. Առաջարկությունը չի ընդունվել: Ջբաղվածության ակտիվ նոր քաղաքականության նպատակը, որն ամրագրված է զբաղվածության ռազմավարության մեջ, իր հստակ արտացոլումն է գտել նախագծի 7-րդ հոդվածում, ընդ որում՝ նշված հոդվածում նախատեսված զբաղվածության քաղաքականության նպատակը ուղղակիորեն բխում է առաջարկվող քաղաքականության սկզբունքներից ու նոր մոտեցումներից և համահունչ է զբաղվածության ոլորտի ներկա զարգացումներին, առկա մարտահրավերներին, միտված է ոլորտում առկա հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ նախագծով առաջարկվում է զբաղվածության քաղաքականության հիմնական գործիք հանդիսացող ամենամյա ծրագրի մշակման, իրականացման, մոնիթորինգի ու գնահատման հստակ և ամբողջական կարգավորում, ինչը բխում է զբաղվածության նոր քաղաքականության հիմնական նպատակից: Ավելին, գործող օրենքով ամբողջապես կարգավորված չեն ամենամյա ծրագրի մշակման, իրականացման գործընթացները, իսկ մոնիթորինգը և գնահատումը ընդհանրապես բացակայում են: Մյուս կողմից, կայուն զբաղվածությունը, որպես հստակ չափելի և շահառուների հետ հետադարձ կապ ենթադրող չափանիշների ու ցուցանիշների համակարգ, ուղղակիորեն դրվում է զբաղվածության քաղաքականության նպատակի հիմքում՝ որպես ակնկալվող արդյունք: Հետևաբար, զբաղվածության քաղաքականության մշակման և իրականացման ողջ գործընթացները դառնում են առավել թափանցիկ, գնահատման տեսանկյունից՝ չափելի և այդ ճանապարհով ձեռք են բերում նաև նպատակային կառավարման</p>
-----------------------------	--	--

	<p>Նախագծի 4-րդ, 6-րդ, 12-րդ հոդվածներ</p>	<p>3. Օրինագծի մի շարք հոդվածներում (օրինակ հոդված 4, կետ 10, 11, հոդված 6, կետ 5, հոդված 12 կետ 1, ենթակետեր 4, 7 և այլն) լիազոր մարմնի իրավասությանն են վերապահվել չափանիշներ, չափորոշիչներ և պայմաններ սահմանելու լիազորություններ, որոնք գտնվում են օրենքի կարգավորման ոլորտում: Առաջարկվում է այս մոտեցումը վերանայել համապատասխանեցնելով ՀՀ Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին:</p> <p>4. Դրական գնահատելով օրինագծում ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված անձանց զբաղվածության քաղաքականության ներքո դիտարկելու օրինագծի հեղինակների ցանկությունը, այնուամենայնիվ, բացակայում են նրանց աշխատանքով ապահովելու կամ եկամտաստեղծ գործունեության մեջ ներգրավելու կառավարության պարտավորության ամրագրումն ու կոնկրետ ծրագրերի իրականացման օրենսդրական կանոնակարգումները: Նույնը վերաբերում է նաև մինչև</p>	<p>համար անհրաժեշտ ու բավարար բոլոր հիմքերը և հնարավորությունները:</p> <p>3. Առաջարկությունն ընդունվել է մասնակի: Նախագծով առաջարկվող զբաղվածության պետական կարգավորումն ունի ձկուն բնույթ, ինչը պայմանավորված է զբաղվածության ոլորտի օբյեկտիվ և արագ փոփոխվող իրավիճակով և դրան համապատասխան պետական կարգավորման անհրաժեշտությամբ: Հետևաբար, նախագծով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում բնակչության զբաղվածության խթանման տնտեսական և կազմակերպական դրույթներն ու իրավական հիմքերը, սահմանվում է զբաղվածության բնագավառում քաղաքացիների իրավունքների իրացումը, պետության կողմից մատուցվող ծառայությունների տեսակները, գործազրկության դեպքում սոցիալական աջակցության ձևերը, ինչպես նաև պետական-մասնավոր համագործակցության իրավական հիմքերը: Առանձին դեպքերում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, ՀՀ կառավարության որոշումներով նախատեսվում է սահմանել ընթացակարգեր և կառուցակարգեր: Այս առումով, նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին:</p> <p>4. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 22-րդ հոդվածով նախատեսված է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած և մինչև երեք տարեկան երեխա խնամող անձանց համարել աշխատաշուկայում անմրցունակ և ընդգրկել նախագծի 23-րդ հոդվածով ամրագրված մի շարք ծրագրային</p>
--	--	---	---

	<p>Նախագծի 19-րդ հոդված</p>	<p>երեք տարեկան երեխա խնամող անձանց աշխատանքային շուկա մուտք գործելու դեպքերին:</p> <p>5. Թեև անդրադարձ և որոշակի կանոնակարգում կա մասնավոր զբաղվածության ծառայություններ մատուցողներին, սակայն դրանք խիստ մակերեսային և ըստ էության ոչ էական ազդեցություն կարող են ունենալ նմանատիպ կազմակերպությունների գործունեության վրա: Հաշվի առնելով, որ այս կազմակերպություններից շատերի գործունեությունը ենթակա է վերահսկողության և նրանց գործունեությունը՝ աշխատողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, կարիք ունի կանոնակարգման, հարկ է ամրագրել նման գործունեության լիցենզավորման պայմանը համապատասխան կանոնակարգմամբ:</p> <p>6. Օրինագծում հստակ սահմանազատված չեն պետական քաղաքականության սահմանները աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի կանոնակարգման տեսանկյունից: Արդյունքում օրինագիծը առաջացնում է խառնաշփոթ այս երկու տիրույթներում կանոնակարգելու առումով: Մի կողմից, օրինագծի տրամադրվածությունը աշխատուժի առաջարկի կանոնակարգումն է, որը չի անդրադառնում դրա ամբողջական հատվածին, մյուս կողմից, առկա են դրույթներ՝ սոցիալական խոցելի առանձին խմբերին եղած աշխատաշուկայի կառուցվածքում տեղավորելու համար (օրինակ՝ հաշմանդամները): Մինչդեռ, մեր կարծիքով, հարկ է հստակ տարանջատել և կանոնակարգել աշխատուժի առաջարկի և պահանջարկի ձևավորման առանձնահատկություններ՝ պետական կարգավորման դեպքերը, նպատակներն ու միջոցները:</p>	<p>ուղղություններում՝ առաջնահերթության կարգով:</p> <p>5. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության մոտեցումն է հնարավորինս կրճատել արտադրությունների կազմակերպման և ծառայությունների մատուցման գործունեության լիցենզավորման գործընթացը: Մյուս կողմից, նախագծով առաջարկվում է ոչ պետական կազմակերպությունների գործունեության կարգավորման մոտեցում, որը հիմնված է փոխշահավետ համագործակցության, այլ ոչ թե վարչական, կոշտ կարգավորման վրա: Արդյունքում, հնարավոր կլինի խթանել պետական ու մասնավոր կազմակերպությունների համագործակցությունը, արդյունավետ մրցակցությունը, և ինստիտուցիոնալ այդ կարգավորման միջոցով բարելավել զբաղվածության պետական ծրագրերի հասցեականությունը, նպատակայնությունը և արդյունավետությունը, ինչպես նաև հնարավորինս զերծ մնալ վարչական կոշտ կարգավորման ռիսկերից:</p> <p>6. Առաջարկությունը չի ընդունվել: Նախագծի 7-րդ հոդվածում պարզ և հստակ սահմանված է զբաղվածության քաղաքականության նպատակը, ընդ որում՝ նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է. «Զբաղվածության պետական քաղաքականության նպատակը, որպես տնտեսական քաղաքականության բաղադրիչի, անհրաժեշտ քանակով և որակով աշխատուժի պահանջարկի բավարարման և առկա աշխատուժի առաջարկի արդյունավետ իրացման ապահովումն է, որը պետք է դիտվի տնտեսական կայուն զարգացման հիմնական պայմաններից մեկը», իսկ 3-րդ մասը սահմանում է. «Զբաղվածության պետական</p>
--	-----------------------------	--	--

		<p>7. Դրական ընդունելով օրինագծով առաջարկվող զբաղվածության նոր ակտիվ ծրագրերին հատկացվող միջոցների կտրուկ ավելացումը, անընդունելի և հակասահմանադրական է դիտվում գործազրկության նպաստի վերացման առաջարկվող մոտեցումը: Նախ գործող օրենքով գործազրկության նպաստի ստացումը պայմանավորված է մասնավորապես շահառուի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունենալու կամ սոցիալական ապահովության վճարներ կատարելու հանգամանքով, հետևաբար համերաշխության ֆոնդին (տվյալ դեպքում պետական բյուջե կամ սոցիալական ապահովության հիմնադրամ) կատարված վճարները նպատակ ունեն նաև ապահովել այն կատարող անձանց կողմից գործազրկության նպաստներ ստանալու իրավունքի իրացումը: Մինչդեռ, վերացնելով այս կապը, ըստ էության փոփոխվում է նաև ի սկզբանե ձևավորված խաղի կանոնը, ինչը թե միջազգային իրավունքի և թե նաև փորձի տեսակետից ընդունելի չէ: Մյուս կողմից, ՀՀ Սահմանադրության անցումային թիվ 117 հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ Սահմանադրության փոփոխություններից հետո Սահմանադրությամբ սահմանված սոցիալական իրավունքները գործում են օրենքներով սահմանված ծավալով: Նկատի առնելով, որ Սահմանադրության 37-րդ հոդվածով սահմանված գործազրկության դեպքում սոցիալական ապահովության իրավունքի իրականացմանը ուղղված գործող օրենքը ամրագրում է գործազրկության նպաստի համակարգը, հետևաբար, այն չի կարող նվազեցվել: Սահմանադրական նման</p>	<p>քաղաքականության նպատակը, որպես սոցիալական պաշտպանության քաղաքականության բաղադրիչի, արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների երաշխավորումն ու պայմանների հետևողական ապահովումն է, ինչպես նաև աշխատանք փնտրող անձի աշխատաշուկայում անմրցունակության որոշարկումն ու արդյունավետ ներառման ապահովումն է, որը պետք է դիտարկվի երկրում սոցիալական լարվածության թուլացման հիմնական պայմաններից մեկը»:</p> <p>7. Առաջարկությունը չի ընդունվել: Զբաղվածության նոր քաղաքականությունը հիմնված է «աջակցել և պահանջել» հիմնական սկզբունքի վրա և ունի բացառապես ակտիվ բնույթ: Քաղաքականության նշված սկզբունքի և բնույթի որդեգրման համար հիմք են հանդիսացել զբաղվածության ոլորտի և աշխատաշուկայի խորքային ու բազմակողմանի վերլուծությունները, այդ շրջանակներում իրականացված գնահատումները և միջնաժամկետ կանխատեսումները, ընդ որում՝ վերը նշված վերլուծությունները և զբաղվածության նոր քաղաքականության մոդելն անհրաժեշտ հիմնավորումներով ներառված են զբաղվածության ռազմավարության մեջ, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել 2012թ.-ին: Գործազրկության նպաստի վճարման ծրագիրը վերափմաստավորվում և փոխարինվում է զբաղվածության ակտիվ ծրագրերով հետևյալ հիմնավորմամբ:</p> <p>1) Գործազրկության նպաստի վճարումը զբաղվածության գործող մյուս ծրագրերի համեմատ 2008-2012թթ. ունեցել է կայուն զբաղվածության ամենացածր ցուցանիշը (շուրջ 2 անգամ ցածր, քան մյուս</p>
--	--	---	--

		<p>կարգավորման մասին է փաստվում նաև ՀՀ Սահմանադրության գիտագործնական մեկնաբանություններով: Ինչպես ներկայացված է այս մեկնաբանություններում.</p> <p>«Սահմանադրական սկզբունքները և նորմերը, որոնք կազմում են սոցիալական իրավունքների կարգավորման հիմքը, ենթադրում են, որ այս ոլորտի օրենսդրությունը պետք է բնութագրվի բանական կայունության, իրավական կանխատեսելիության և որոշակիության, արդարության հատկանիշներով, կամայական փոփոխությունների բացակայությամբ, սոցիալական պաշտպանության ձեռք բերված մակարդակի պահպանմամբ ու հարուցի քաղաքացիների վստահությունը: Սոցիալական պետության սկզբունքը սոցիալական ոլորտում իրավական քաղաքականության սահմանադրական չափանիշ է:</p> <p>Սոցիալական ոլորտում պետությունն ստանձնելով որոշակի հանրային-իրավական պարտավորություններ՝ չի կարող կամայականորեն հրաժարվել դրանց կատարման պարտականությունից: Հակառակը կնշանակի արդարության, իրավական և սոցիալական պետության սկզբունքների խախտում: Սրանից բխում է, որ իրավական կարգավորման ցանկացած փոփոխության դեպքում պետությունը պարտավորված է պահպանել (երաշխավորել) քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության արդեն իսկ սահմանված մակարդակը, սոցիալական պաշտպանվածության համապատասխան օրենքներով ամրագրված երաշխիքները: Սոցիալական պաշտպանության մակարդակի իջեցումը կամ նվազեցումը չի համապատասխանում սոցիալական պետության և արդարության հրամայականների պահանջներին: Պետության ֆինանսական հիմնախնդիրներն անթույլատրելի է լուծել սոցիալական իրավունքների սահմանադրական երաշխիքների հաշվին: Ելնելով վերը նշված հիմնադրույթներից՝ մեկնաբանվող կետում ամրագրված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ իսպառ բացառվում է համապատասխան ՀՀ օրենքներով սահմանված սոցիալական իրավունքների նվազեցումը կամ սահմանափակումը, քանի որ դրանք, առանց բացառության, գործելու են այդ օրենքներով սահմանված ողջ ծավալով:»:</p> <p>Այս մեկնաբանության հիման վրա, առաջարկվում է</p>	<p>ծրագրերի միջին ցուցանիշը):</p> <p>2) Նպաստառու գործազուրկների թիվը վերջին երեք տարիների ընթացքում ունեցել է կտրուկ նվազման միտում (2011թ.-ին 2010թ.-ի համեմատ նվազել է 24.1 %-ով, 2012թ.-ին 2011թ.-ի համեմատ՝ 29.4%-ով): Արդյունքում, անշեղորեն կրճատվում է նաև զբաղվածության պետական կարգավորման ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների չափը: Առաջարկվող քաղաքականության նոր մոդելի ներքո՝ գործնականում հնարավոր է դառնում ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների կրճատման կանխարգելման և ավելացման ապահովումը:</p> <p>3) Գործազրկության նպաստի վճարման ծրագիրն ունեցել է բացառապես պասիվ բնույթ, ինչը վկայում է նաև դրա միջին տևողությունը (10 ամիս) այն դեպքում, որ գործազրկության նպաստի վճարման նվազագույն տևողությունը 6 ամիս է, իսկ առավելագույնը՝ 12 ամիս:</p> <p>4) Գործազրկության նպաստ ստացողների մեջ կանանց թիվը շուրջ 2 անգամ գերազանցել է տղամարդկանց թիվը, իսկ 50-ից բարձր տարիք ունեցողները կազմել են շահառուների հիմնական մասը, ինչը ևս խոսում է ծրագրի պասիվ բնույթի մասին:</p> <p>5) Ավելացել են հետևյալ նոր ակտիվ ծրագրերը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- լիազորված մարմնի միջնորդությամբ հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման.</li> <li>- փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության.</li> <li>- սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության.</li> <li>- լիազորված մարմնի հետ համագործակցող ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար</li> </ul>
--	--	--	--

		<p>պահպանել գործող օրենքով նախատեսված գործազրկության նպաստի ինստիտուտը:  Քանի որ օրինագիծը սերտորեն առնչվում է խորհրդարանում քննարկվող 2014 թվականի պետական բյուջեի հետ, ինչպես նաև այն, որ ըստ ՀՀ ԱԺ-ում ներկայացված հիմնավորումների, ՀՀ կառավարությունը իր պահուստային միջոցներից պատրաստ է ֆինանսավորել զբաղվածության այլ ծրագրերը (1.4 մլրդ. դրամի չափով), ծայրահեղ դեպքում առաջարկվում է բյուջեի նախագծով նախատեսված 2.3 մլրդ. դրամը ծախսել ակտիվ ծրագրերի համար, իսկ 1.4 մլրդ. դրամով ֆինանսավորել գործազրկության նպաստները:  Հետագայում, իրականացվող ակտիվ ծրագրերի արդյունավետությունից ելնելով, քննարկել դրանցով առավել մեծ միջոցներ նախատեսելու հնարավորությունը՝ ի հաշիվ պասիվ ծրագրերի:</p>	<p>աջակցության.  - աշխատանքի տեղավորման դեպքում՝ անհրաժեշտ աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռք բերման համար միանվագ փոխհատուցման ծրագրերը:  6) Զբաղվածության գործող և նոր ծրագրերը վերաիմաստավորվել են՝ հիմքում ունենալով դրանց բացառապես ակտիվ բնույթ հաղորդելու անհրաժեշտությունը:  7) Գործազրկության նպաստի վճարման ծրագիրը, ինչպես վկայում է 2008-2012թթ. ծրագրերի վերլուծությունը, ունեցել է թույլ արտահայտված սոցիալական բնույթ (օրինակ՝ գործազրկության նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի մեջ շուրջ 9%-ը ներառված է եղել ընտանեկան նպաստի համակարգում):  8) Կարգավորման նոր մոտեցմամբ նախատեսվում է, որ սոցիալապես անապահով գործազուրկները կարող են ներառվել նաև ընտանեկան նպաստի համակարգում և ստանալ ընտանեկան նպաստ, ինչը համահունչ է նաև ներկա իրավիճակին («Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում հաշվառված գործազուրկների շուրջ 1/3 մասը ներառված է նաև ընտանեկան նպաստի համակարգում և ստանում է ընտանեկան նպաստ):  Այլ կերպ ասած, ընտանեկան նպաստի համակարգն այսօր էլ ունի պաշտոնապես գրանցված գործազուրկների ներառման բավականին բարձր աստիճան: ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ ՀՀ Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրամբ սահմանված սոցիալական իրավունքները գործում են համապատասխան օրենքներով սահմանված ծավալով: Գտնում ենք, որ օրենքով գործազրկության</p>
--	--	---	--

		<p>8. Օրինագծից բացակայում է նորմատիվ դրույթը, որի համաձայն զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիական պաշտպանության համար նախատեսվող ֆինանսական միջոցները յուրաքանչյուր հաջորդ տարի չեն կարող նվազել: Առաջարկվում է ամրագրել նման դրույթ:</p>	<p>նպաստի ծրագրի վերահիմնաստավորումը և դրան ուղղվող միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործումը, որը բխում է օբյեկտիվ իրավիճակից և պետական կարգավորման անհրաժեշտությունից որևէ կերպ չի հակասում ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին:</p> <p>8. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ ՀՀ-ում միջնաժամկետ ծախսային պլանավորման ծրագիր է ներդրված, որը յուրաքանչյուր տարի փոփոխվում է, հիմք ընդունելով ծրագրերի կատարողականը, ընթացիկ իրավիճակը և միջնաժամկետ կանխատեսումները: Մյուս կողմից, զբաղվածության ոլորտը մեր երկրում դինամիկ փոփոխությունների է ենթարկվում, ինչը պահանջում է կարգավորման ձևերի մոտեցումներ և նպատակային ֆինանսավորում: Եվ այդ ֆինանսավորման հիմքում նախագծին համապատասխան պետք է դրվեն ծրագրային առաջնահերթությունները, ծրագրերի գնահատված կատարողականը, ինչպես նաև ծրագրերում ընդգրկված և ընդգրկման ենթակա շահառուների թվաքանակը:</p>
<p>ՀՀ պատգամավոր Կ.Ճճնարիտյան 2013-11-11 N 02/10.5/17183-13</p>	<p>Նախագծի 1-ին հոդված</p> <p>Նախագծի 4-րդ հոդված</p>	<p>1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետը համապատասխանեցնել օրենքին՝ ավելացնելով զբաղվածության ոլորտում քաղաքականությունը:</p> <p>2. Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետից հանել «...և ստացել է գործազուրկի կարգավիճակ» արտահայտությունը:</p>	<p>1. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ պետության կողմից զբաղվածության ոլորտում իրականացվող քաղաքականությունը հանգամանորեն ներկայացված է նախագծի 2-րդ և 3-րդ գլուխներում:</p> <p>2. Առաջարկությունը չի ընդունվել: Անձին որպես գործազուրկ ճանաչելու պարտադիր նախապայման է համարվում համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի կողմից գործազուրկի կարգավիճակ տալը՝ համապատասխան որոշմամբ: Այդ առումով հաշվի են առնվել նաև նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերով:</p>

	Նախագծի 5-րդ հոդված	<p>3. Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետի ա. ենթակետում «երեք ամսվա» բառերը փոխարինել «չորս ամսվա» բառերով:</p> <p>4. Նախագծի 4-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերը հանել:</p> <p>5. Նախագծի 4-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերը համապատասխանեցնել վիճակագրական ստանդարտներով տրված սահմանումներին:</p> <p>6. Նախագծի 4-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ կետերում «... հողի սեփականատեր» բառերը հանել:</p> <p>7. Նախագծի 5-րդ հոդվածում ավելացնել հանրապետական և պետական կառավարման մարմինների ղեկավարների և տեղակալների, ընտրովի ղեկավար պաշտոններում աշխատողներին:</p>	<p>սահմանված դրույթները:</p> <p>3. Առաջարկությունը չի ընդունվել: Գտնում ենք, որ երեք ամիսը բավարար ժամկետ է աշխատանքից ազատման ռիսկ ունեցող անձի կողմից իր հմտություններն ու ունակությունները զարգացնելու համար, քանի որ մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկվելու տևողությունը նույնպես սահմանված է մինչև 3 ամիս:</p> <p>4. Առաջարկությունը չի ընդունվել՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանված պահանջը: Տվյալ դեպքում նախագծի 4-րդ հոդվածի 8-րդ կետով տրված «նոր ստեղծվող աշխատատեղ» և 9-րդ կետով տրված «զբաղվածության պետական ծրագրեր» հասկացություններն օգտագործվում են նախագծի մի շարք հոդվածներում:</p> <p>5. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ նախագծի 4-րդ հոդվածով տրված սահմանումները կիրառվում են սույն օրենքի իմաստով:</p> <p>6. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածի 14-րդ կետից հանվել են «կամ հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող» բառերը, իսկ 15-րդ կետը հանվել է:</p> <p>7. Առաջարկությունը չի ընդունվել: Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված կարգավորումը վերաբերում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում աշխատանքային գործունեությանը: Մասնավորապես, առաջարկությունում մատնանշված՝ հանրապետական և</p>
--	---------------------	---	--



	<p>Նախագծի 13-րդ և 14-րդ հոդվածներ</p> <p>Նախագծի 20-րդ հոդված</p>	<p>11. Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին կետը դարձնել 13-րդ հոդվածի 2-րդ կետ և հանել նախագծի 14-րդ հոդվածը:</p> <p>12. Նախագծի 20-րդ հոդվածի 2-12-րդ կետերը հանել, փոխարենը նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման տնտեսվարող սուբյեկտների խթանման, այլ ոչ թե պարտադրման համակարգ:</p>	<p>հարաբերությունները՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները: Այդ առումով, նախագծում լիազորված մարմնի իրավասությունների սահմանումը առանցքային նշանակություն ունի և բխում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջներից:</p> <p>11. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ նախագծի 14-րդ հոդվածով նախատեսված ամենամյա ծրագրի մոնիթորինգի և գնահատման գործընթացների իրավական հիմքերը՝ ըստ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի, պետք է սահմանվեն օրենքով և դրանից բխող այլ իրավական ակտերով:</p> <p>12. Առաջարկությունը չի ընդունվել: Նախագծով առաջարկվող քվոտային վերաբերող դրույթները քննարկվել են շահագրգիռ պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ, այդ թվում՝ սոցիալական գործընկերության շրջանակներում: Արդյունքում, քվոտայի չափերի և ներդրման ժամկետների համաձայնեցված և ընդունելի տարբերակը ներառվել է նախագծում: Ընդ որում՝ հարկ է նշել, որ քվոտավորումը խնդրի կարգավորման միջազգայնորեն ընդունված պրակտիկա է: Միևնույն ժամանակ նախագծով աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուների համար նախատեսվում է պետական աջակցություն:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Նախագծի 1-ին հոդված</p>	<p>Նախագծի 1-ին հոդվածում «պաշտպանության» բառը փոխարինել «աջակցության» բառով:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 1-ին հոդվածում «պաշտպանության» բառը փոխարինվել է «աջակցության» բառով:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Նախագծի 4-րդ, 9-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածներ</p>	<p>Հաշմանդամներին և գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց համարել գործազուրկ և համապատասխան փոփոխություններ</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 4-րդ, 9-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Մասնավորապես, 4-րդ</p>

		<p>կատարել նախագծի 4-րդ, 9-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածներում:</p>	<p>հոդվածի 1-ին մասի՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• 1-ին կետը խմբագրվել է և հանվել են «կամ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսանալը» բառերը,</li> <li>• խմբագրվել է 3-րդ կետը և շարադրվել հետևյալ խմբագրությամբ. «3) գործազուրկ՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած աշխատանք փնտրող և սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված գործունեության որևէ տեսակով չզբաղված անձ, որը աշխատանք գտնելու նպատակով հաշվառված է լիազորված մարմնում, պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի և ստացել է գործազուրկի կարգավիճակ.»,</li> <li>• 11-րդ կետում «3-րդ կամ 6-րդ» բառերը փոխարինվել են «2-րդ կամ 4-րդ» բառերով և հանվել են «աշխատանք փնտրող» բառերը,</li> <li>• 14-րդ կետում հանվել են «կամ հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող » բառերը,</li> <li>• 15-րդ կետը հանվել է: Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը խմբագրվել է և շարադրվել հետևյալ խմբագրությամբ. «2) լրացել է գործազուրկի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը.»: Նախագծի 21-րդ հոդվածի՝</li> <li>• 3-րդ մասում «աշխատանք փնտրող չզբաղված անձը» բառերը փոխարինվել են «գործազուրկը» բառով.</li> <li>• 5-րդ մասը հանվել է: Նախագծի գլուխ 5-ի վերնագրից և 22-րդ հոդվածի 1-ին մասից հանվել են «աշխատանք փնտրող չզբաղված անձի» բառերը, իսկ «աշխատաշուկայում» բառից հետո լրացվել է «գործազուրկի» բառով:</li> </ul>
--	--	--	--

<p>«Կ կառավարություն</p>	<p>Նախագծի 9-րդ հոդված</p>	<p>1. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում «և ստացման» բառը փոխարինել «դրանց ներկայացման» բառերով:</p> <p>2. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի «7 օրացուցային» բառերը փոխարինել «5 աշխատանքային» բառերով:</p>	<p>1. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում «ստացման» բառը փոխարինվել է «դրանց ներկայացման» բառով:</p> <p>2. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի «7 օրացուցային» բառերը փոխարինվել են «5 աշխատանքային» բառերով:</p>
<p>«Կ կառավարություն</p>	<p>Նախագծի 11-րդ հոդված</p>	<p>Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը լրացնել «և կանխատեսում» բառերով:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը լրացվել է «և կանխատեսում» բառերով:</p>
<p>«Կ կառավարություն</p>	<p>Նախագծի 16-րդ հոդված</p>	<p>1. Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասում «Զբաղվածության» բառից առաջ լրացնել «Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված ուղղություններով իրականացվող» բառերը:</p> <p>2. Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ.  «2. Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով կամ 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված ուղղություններով իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում անձի ստացած, ինչպես նաև ծրագրի իրականացման համար ծախսված ֆինանսական միջոցները վերադարձվում են անձի կողմից, եթե տվյալ անձը ծրագրում ընդգրկվելու պահին եղել է զբաղված կամ ներկայացրել է ոչ հավաստի տվյալներ կամ լիազոր մարմնին չի տեղեկացրել նախկինում ներկայացված տվյալներում կատարված փոփոխությունների մասին կամ խախտել է համապատասխան պայմանագրային պարտավորությունները:»:</p>	<p>1. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասում «Զբաղվածության» բառից առաջ լրացվել են «Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված ուղղություններով իրականացվող» բառերը:</p> <p>2. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացվել է նոր մաս հետևյալ բովանդակությամբ.  «2. Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով կամ 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված ուղղություններով իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում անձի ստացած, ինչպես նաև ծրագրի իրականացման համար ծախսված ֆինանսական միջոցները վերադարձվում են անձի կողմից, եթե տվյալ անձը ծրագրում ընդգրկվելու պահին եղել է զբաղված կամ ներկայացրել է ոչ հավաստի տվյալներ կամ լիազոր մարմնին չի տեղեկացրել նախկինում ներկայացված տվյալներում կատարված փոփոխությունների մասին կամ խախտել է համապատասխան պայմանագրային պարտավորությունները:»:</p>

		<p>3. Նախագծի 16-րդ հոդվածի 5-րդ մասում «վերադարձվում են» բառից հետո լրացնել «սխալը թույլ տված պաշտոնատար անձի (անձանց) կողմից» բառերը:</p> <p>4. Նախագծի 16-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ. «6. Ջբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում գործատուների և ոչ պետական կազմակերպությունների կողմից ստացված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման միանվագ՝ լիազորված մարմնի հետ ունեցած պայմանագրային պարտավորությունների խախտումը թույլ տալու դեպքում՝ մեկ ամսյա ժամկետում, ընդ որում՝ գործատուների և ոչ պետական կազմակերպությունների կողմից ֆինանսական միջոցները չվերադարձնելու դեպքում այդ գումարները բռնագանձվում են դատական կարգով:»:</p>	<p>3. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 16-րդ հոդվածի 5-րդ մասում «վերադարձվում են» բառից հետո լրացվել են «սխալը թույլ տված պաշտոնատար անձի (անձանց) կողմից» բառերը:</p> <p>4. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 16-րդ հոդվածը լրացվել է նոր մասով հետևյալ բովանդակությամբ. «6. Ջբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում գործատուների և ոչ պետական կազմակերպությունների կողմից ստացված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման միանվագ՝ լիազորված մարմնի հետ ունեցած պայմանագրային պարտավորությունների խախտումը թույլ տալու դեպքում՝ մեկ ամսյա ժամկետում, ընդ որում՝ գործատուների և ոչ պետական կազմակերպությունների կողմից ֆինանսական միջոցները չվերադարձնելու դեպքում այդ գումարները բռնագանձվում են դատական կարգով:»:</p>
<p>&lt;&lt; կառավարություն</p>	<p>Նախագծի 20-րդ հոդված</p>	<p>1. Նախագծի 20-րդ հոդվածի 8-րդ մասը «համար» բառից հետո լրացնել ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված» բառերով:</p> <p>2. Նախագծի 20-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել «առանց ամենամյա ծրագրով հաշմանդամություն ունեցող գործազուրկների համար նախատեսված աջակցության» բառերով:</p> <p>3. Նախագծի 20-րդ հոդվածի 11-րդ մասից հանել «,ինչպես նաև քվոտայի պահանջի կատարման ապահովման համար կազմակերպությունների և պետական աջակցություն տրամադրելու» բառերը:</p>	<p>1. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 20-րդ հոդվածի 8-րդ մասը «համար» բառից հետո լրացվել է ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված» բառերով:</p> <p>2. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 20-րդ հոդվածի 5-րդ մասը լրացվել է «առանց ամենամյա ծրագրով հաշմանդամություն ունեցող գործազուրկների համար նախատեսված աջակցության» բառերով:</p> <p>3. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 20-րդ հոդվածի 11-րդ մասից հանվել են «,ինչպես նաև քվոտայի պահանջի կատարման ապահովման համար կազմակերպությունների և պետական աջակցություն տրամադրելու» բառերը:</p>

		4. Նախագծի 20-րդ հոդվածի 12-րդ մասը հանել, ինչպես նաև 15-րդ հոդվածի 1-ին մասից հանել «՝ նկատի ունենալով նաև սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պահանջի կատարման ապահովումը» բառերը:	4. Նախագծի 20-րդ հոդվածի 12-րդ մասը հանվել է, ինչպես նաև 15-րդ հոդվածի 1-ին մասից հանվել են «՝ նկատի ունենալով նաև սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պահանջի կատարման ապահովումը» բառերը:
<< կառավարություն	Նախագծի 21-րդ հոդված	1. Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով գործազուրկների համար նախատեսված ծրագրային ուղղությունները տեղափոխել 23-րդ հոդվածի 1-ին մաս և նախատեսել աշխատաշուկայում անմրցունակ համարվող գործազուրկների համար:  2. Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից հանել «հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում առկա» բառերը:	1. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերը հանվել են և ներառվել 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերում:  2. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից հանվել են «հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում առկա» բառերը:
<< կառավարություն	Նախագծի 22-րդ հոդված	1. Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «պահպանված աշխատունակության աստիճանը» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունենալու հանգամանքը» բառերով:  2. Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 11-րդ և 12-րդ կետերով հետևյալ բավանդակությամբ. «11) անձի մինչև երեք տարեկան երեխա խնամելու հանգամանքը. 12) անձի ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում լիազորված մարմնում հաշվառվելու հանգամանքը:»:	1. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «պահպանված աշխատունակության աստիճանը» բառերը փոխարինվել են «հաշմանդամություն ունենալու հանգամանքը» բառերով:  2. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր՝ 11-րդ և 12-րդ կետերով հետևյալ բավանդակությամբ. «11) անձի մինչև երեք տարեկան երեխա խնամելու հանգամանքը. 12) անձի ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում լիազորված մարմնում հաշվառվելու հանգամանքը:»:
<< կառավարություն	Նախագծի 23-րդ հոդված	Նախագծի 23-րդ հոդվածում աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար նախատեսել «լիազորված մարմնի միջնորդությամբ հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման» և «սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության» ծրագրային նոր ուղղությունները:	Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր՝ 6-րդ և 7-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ. «6) լիազորված մարմնի միջնորդությամբ հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման իրավունք. 7) սեզոնային զբաղվածության խթանման

			միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության իրավունք:»:
«Կառավարություն	Նախագծի գլուխներ 6, 7	Նախագծի 6-րդ և 7-րդ գլուխները խմբագրել, մասնավորապես, 24-րդ և 25-րդ հոդվածներով նախատեսված դրույթները խմբագրել և ներառել նախագծի 3-րդ հոդվածում, իսկ 26-րդ և 27-րդ հոդվածների դրույթները՝ 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում:	Առաջարկությունն ընդունվել է և կատարվել են համապատասխան փոփոխություններ:
«Կառավարություն		«Ջբաղվածության մասին» «Օրենքից բխող իրավական ակտերը սահմանել ոչ թե լիազորված մարմնի կողմից, այլ «Կառավարության կողմից:	Առաջարկությունն ընդունվել է և կատարվել են համապատասխան փոփոխություններ նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 9-11-րդ կետերում, 6-րդ հոդվածի 5-րդ մասում, 9-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետում, 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 8-րդ կետերում, 20-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ, 5-րդ կետերում և 15-րդ մասում, 21-րդ հոդվածի 2-րդ մասում, 2-րդ մասի 1-ին կետում և 3-րդ մասի 2-րդ կետում, 22-րդ հոդվածի 2-րդ մասում, 23-րդ հոդվածի 1-ին մասում, 24-րդ հոդվածի 6-րդ մասում: